Մասնավորապես՝ «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի անդամ երկրներում բնակվող՝ որդեգրել ցանկացող օտարերկրացիները, Հայաստանի սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով, արդարադատության նախարարություն են ներկայացնում տվյալ երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու վերաբերյալ: Նշված փաստաթուղթը երաշխավորություն է տալիս արդարադատության նախարարությանը երեխայի ընդունող պետության կենտրոնական մարմնից տեղեկություններ ստանալ երեխայի վերաբերյալ որդեգրման գործընթացի ավարտից հետո:

Հաշվի առնելով, որ Հայաստանի քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու համար արդարադատության նախարարություն են դիմում նաև կոնվենցիային չանդամակցող երկրների քաղաքացիները, նշված երկրների քաղաքացիների կողմից սահմանված փաստաթղթերի հետ միաժամանակ արդարադատության նախարարություն է ներկայացվում դիմողների մշտական բնակության երկրի իրավասու մարմնի թույլտվությունը կամ երաշխավորագիրը Հայաստանում որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու վերաբերյալ, որդեգրել ցանկացող անձի կենսապայմանների ուսումնասիրության մասին ակտը և հետագայում որդեգրված երեխայի կյանքի պայմանների նկատմամբ վերահսկողության մասին տեղեկանք:

Արդարադատության նախարարության, օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմնին: Ինչպես նաև արդարադատության նախարարությունը պարբերաբար զեկույցներ է ստանում օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից որդեգրված երեխաների կյանքի պայմանների վերաբերյալ և հավաքագրում է այդ երեխաների մասին տեղեկությունները: